Հավելված
ՀՀ կառավարության 2017 թվականի
նոյեմբերի 9-ի N 1417 - Ն որոշման

Ձ Ե Վ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂԻ ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՎԿԱՅԱԿԱՆԻ

1. Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը (այսուհետ՝ վկայական) 54 x 85.7 մմ չափերի, պոլիմերային նյութից պատրաստված քարտ է:

2. Վկայականի ամբողջ մակերևույթը պատված է պաշտպանիչ ուլտրամանուշակագույն պատկերով՝ կապույտ և կարմիր կիսաշրջանաձև սլաքներ, որոնց մեջտեղի հատվածում գրված է «ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» և «STATE MIGRATION SERVICE»:

3. Քարտի վերին եզրից 0.63 մմ հեռավորության վրա՝ քարտի երկայնքով, միմյանցից 0.73 մմ հեռավորությամբ անցնում են կապույտ գույնի 3.3 մմ հաստությամբ 2 հորիզոնական շերտագծեր, որոնց միջև քարտի ամբողջ երկարությամբ 0.5 մմ բարձրությամբ հոծ գծի տեսքով անցնում է կապույտ գույնի պաշտպանիչ մանրատառ շերտ՝ հետևյալ կրկնվող բովանդակությամբ. «Հայաստանի Հանրապետություն ապաստան հայցողի վկայական»:

4. Քարտի ձախ եզրից 5 մմ հեռավորության վրա հորիզոնական շերտագծերը 9 մմ երկարությամբ միաձուլված են և այդ մասում 7 x 7 մմ չափով զետեղված է Հայաստանի Հանրապետության զինանշանի գունավոր, ուլտրամանուշակագույն պատկերը:

5. Վերևի հորիզոնական շերտագծի վրա՝ շերտագծի ձախ եզրից 40.45 մմ հեռավորության վրա, սպիտակ գույնով, 7 կետաչափ տպատառով տպագրված են «Հայաստանի Հանրապետություն» բառերը:

6. Ներքևի հորիզոնական շերտագծի վրա՝ շերտագծի ձախ եզրից 42 մմ հեռավորության վրա, սպիտակ գույնով, 7 կետաչափ տպատառով տպագրված են «Ապաստան հայցողի վկայական» բառերը:

7. Հորիզոնական շերտագծերից ներքև՝ քարտի ձախ եզրից 1.5 մմ հեռավորության վրա, տեղակայված է 26 մմ x 20 մմ չափի գունավոր լուսանկարի համար նախատեսված 29 մմ x 22 մմ չափի անձնավորման դաշտը:

8. Հորիզոնական շերտագծերից ներքև՝ քարտի ձախ եզրից 25 մմ հեռավորության վրա, համապատասխան անձնավորման դաշտի վերևի հատվածում 7 կետաչափ տառաչափով կապույտ գույնով տպագրված են անձնավորման դաշտերի անվանումները հետևյալ հերթականությամբ՝

1) ազգանունը.

2) անունը.

3) սեռը.

4) ծնվել է.

5) բնակության հասցեն.

6) տրվել է.

7) ում կողմից:

9. Քարտի ձախ եզրից 53.7 մմ հեռավորության վրա՝ «սեռը» անձնավորման դաշտի անվանմանը զուգահեռ կապույտ գույնով տպագրված է «քաղաքացիությունը», իսկ «ծնվել է» անձնավորման դաշտի անվանմանը զուգահեռ՝ «հայցել է ապաստան» դաշտի անվանումները՝

1) քաղաքացիությունը.

2) հայցել է ապաստան:

10. Քարտի ձախ եզրից 0.86 մմ հեռավորության վրա՝ լուսանկարի անձնավորման դաշտի ներքևի հատվածում 10 կետաչափ տառաչափով տպագրված է վկայականի հերթական համարը:

11. Քարտի ձախ եզրից 0.59 մմ հեռավորության վրա՝ «վկայականի համարը» անձնավորման դաշտից ներքև՝ 6 մմ x 22 մմ չափերով անցնում է սպիտակ գույնի շերտագիծ, որտեղ անձնավորվում է վկայականի համարը հատուկ «BARCODE» (շտրիխկոդ) տառատեսակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ